ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4515-Ա « 20 » նոյեմբերի 2024թ.

ԼԻԼԻԹ ՍԱՄՎԵԼԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.82 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 3-րդ մասի 1-ին կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով «Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 69-րդ կետը, Երևանի քաղաքապետի 2024 թվականի նոյեմբերի 7-ի հ. Ն/66045-24 ծանուցումը, ինչպես նաև Լիլիթ Ասլանյանի հետ 2019 թվականի նոյեմբերի 20-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-րդ գլխի 4.1-րդ կետի «ա» ենթակետը և 5-րդ գլխի 5.1-րդ կետը՝

1. Լիլիթ Սամվելի Ասլանյանին՝ 2024 թվականի նոյեմբերի 21-ից ազատել «Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ.82 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2019 թվականի նոյեմբերի 20-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ.82 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Գոհար Մինասյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ